

656  
4-43

193B1



ՎԱ-1811

01 OCT 2010

Մ. ԱՂԱԽԱՆՅԱՆ.

# ԻՆՉՈՐԵՍ ՊԵՏՔԵ ՅԵՐԱԾՎԵԿԵԼ



342/53

ԽՍՀ. ԳԼԽ. ԿԱՊՈՒԹԻՑ ՅՈՒՂ 1933

ՅԵՐԵՎԱՆ

պատրիկ 33

Հ | Արմ.  
Հ2-32262 Մ. ԱՂԱԽԱՆՅԱՆ

656

Ա-43

ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե  
ՅԵՐԹԵՎԵԿԵԼ

Խմբագր. Գ. Աթանասյան

21041

ՀԵՏԵՎԵՑԵՔ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ - ԱԶԴԱՐԱՐԿԱՆ  
ՆԵԱՆՆԵՐԻՆ ՅԵԿ ՍՈՎՈՐԵՔ ՂԵԿԱՎԱՐՎԵԼ  
ՆՐԱՆՑՈՂ

Digitized by srujanika@gmail.com

#### **ՏԱՐԱԾՈՂԱՎԱՐԱԿԱՆ ԽՀԱՆԵՐԸ**

Ճանապարհայիշնագղարաբական նշաններ կոչ  
վում են այն պայմանական նշանները (նկարները), վոր  
դրվում են քաղաքների փողոցների և առնասարակ ավ-  
տոմորիլային ու սայլային շարժման ճանապարհների  
վտանգավոր տեղերում, ավտոմոեքենաների և մյուս փո-  
խադրական միջոցների պատշաճ, կանոնավոր և ան-  
վտանգ լրեթենեկությունն ապահովելու համար:

Ճանապարհային-ազգաբարական նշանները՝ նախորդ նախազգուշացնում են փոխադրական միջոցների վարորդներին ճանապարհի վտանգավոր տեղերի՝ վոլորանների, դար ու փոսերի, նույնական և հետիոտն (վոտով) յերթենեկության խիտ տեղերի ու անցարանների մասին:

Դրանց շնորհիվ փոխադրական միջոցների վարությունը կարողանում են ժամանակին իմանալ և նախազգուշանալ իրենց ճանապարհի վրա յեղած վտանգավոր տեղերի մասին և հնարավորություն են ունենում ժամանակին համապատասխան միջոցներ ձեռք առնել գանդապեցնելու իրենց շարժման արագությունը և անվտանգ անցնելու ամեն տեսակի ճանապարհների վը տանգավոր տեղերը:

Փոխագուհական միջոցների վարողները պարտավոր են յերթեկնակության ժամանակ անընդհատ ուշադրությամբ հետևել ճանապարհային և ազգային գործառնություններին և զեկավարվել նրանցով:

Գյուղեղատի տպարան  
Գլամիւս № 8824  
Պատվ. 116; Տիբաժ 2000



3972-87

Ղեկավարվել ճանապարհային - աղդաբարական նըշաններով՝ նշանակում ե խուսափել ավարիաներից, զըժքախտ պատահարներից և խնամել ափտոմեքենան:

Ճանապարհային - աղդաբարական նշանները լինում են են յերեք տեսակի, այն ե՝

ա) Ն ա խ ա զ գ ու շ ա կ ա ն ն շ ա ն ն ե ր՝ լինում են ճափառարակող յեռանկյունու ձեկի.

բ) Ա ր դ ե լ ա կ ա ն ն շ ա ն ն ե ր՝ լինում են շրջանաձեկ (կլոր ձեկի).

գ) Ուղեցույց նշաններ՝ լինում են քառակուսի ձեկի:

### 1. ՆԱԽԱԳԳՈՒԽԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

Նախագգուշական նշանները լինում են հագասարակող յեռանկյունու ձեկի, վորոնց յեզրները վառ կարմիր գույնով ներկած են լինում. յեռանկյունու մեջտեղում սպիտակ ֆոնի վրա սև գույնով նկարած ե լինում մի վորկե վտանգի նշան (տես 1—6 նկարները):

Այս ձեկի նշանները լինում են վեց տարրեր տիպարների, վորոնցից յուրաքանչյուրն ունի իր հատուկ պայմանական նշանակությունը:

Նախագգուշական նշանները դրվում են ճանապարհների վտանգավոր տեղերում, ճանապարհի աջ կողմը, վտանգի տեղին դեռ չհասած, այդտեղից 50—100 մետր հեռավորության վրա:

Ցերբ փոխադրական միջոցների վարորդները յերթեկության ժամանակ տեսնում են ճանապարհի աջ կողմում դրված այդպիսի նշաններից վորկե մեկը, այդ նշանները ե, վոր 50—100 մետր անցնելուց հետո նրանք հանդիպելու յեն նշանի ցույց տված վտանգին:

Այդ դեպքում փոխադրական միջոցների վարորդաները պարտավոր են նշանը պարտավոր են նշանը տեսնելուն պես, դանդա-

ղեցնել մեքենայի (կառքի) շարժման ընթացքը, ձեռք առնել բոլոր նախագգուշական միջոցները և զգուշությամբ անցնել ճանապարհի վտանգավոր տեղերը:

Ցերբ փոխադրական միջոցների վարորդները անցնում են ճանապարհի աջ կողմում դրված նշանից և մտնում են վտանգի սահմանը, պարտավոր են շարժվել դանդաղ և զգուշությամբ, մինչև վոր հանդիպեն ճանապարհի ձախ կողմում դրված նույնպիսի նշանը նշանակում ե, վոր վտանգը վերջացել ե և կարելի յեպատ շարունակել յերթեկությունը սովորական արագությամբ:

ՆԱԽԱԳԳՈՒԽԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ա) Յերկարուղու վահապանվող գծանցի (խաչմերուկի) նօտենքը.

բ) Յերկարուղու չափահանվող գծանցի (խաչմերուկի) նօտենքը.

Այս նշանները դրվում են այն տեղերում, վորտեղ յերկաթթվիծ կտրում անցնում և խճուղին, նախքան յերկաթթվին հասնելը 50 մետր հեռավորության վրա, խճուղու աջ կողմը:

Այս յերկու նշաններից մեկին հանդիպելիս, փոխադրական միջոցների վարորդները պարտավոր են դանդաղեցնել շարժման ընթացքը, նայել յերկաթթվին:

Ցերբ կհամոզվեն, վոր գնացք չի գալիս, ապա նըշանը ձայնական աղդանշան են տալիս և զգուշությամբ անցնում յեն յերկաթթվից:

գ) Ճանապարհի վոլորտներ (զիգզագներ - կեռմաններ) ուժեցող ուղեմտությունը նօտենք

Այս նշանը դրվում է ճանապարհի աջ կողմում, նախքան վոլորտներին (կեռմաններին) հասնելը 100 մետր հեռավորության վրա:

Փոխադրական միջոցների վարորդները, այս նշանը տեսնելու գեպքում, պարտավոր են՝ նախքան վրատնդի սահմանը մտնելը, դանդաղեցնել իրենց մեքենայի (կառքի) շարժման ընթացքը, և ազդանշան տուրով, զգուշությամբ անցնել վտանգավոր կեռուանները (զիգզագները), խիստ ճշտությամբ շարժվելով ճանապարհի աջ կողմով:

#### Դ) Յերկու ձանապարհների խաչմերուկի նշանը

Այս նշանը դրվում է ճանապարհների խաչմերուկի մոտ այնպիսի տեղերում, վորտեղ ճանապարհը լավ տեսանելի չե:

Այս նշանին հանդիպելու գեպքում, պետք և շարժվել դանդաղ, ճայնական աղղանշան տալ և զգուշությամբ անցնել խաչմերուկի սահմանը:

#### Ե) Ճանապարհի անհարգությունների (բլրակների) նշանը

Այս նշանին հանդիպելու գեպքում, պետք և շարժվել ճանապարհի աջ կողմով և հաճախակի ճայնական աղղանշան տալ:

#### Ո) Այլ վտանգների նշանը

Այս նշանը դրվում է ճանապարհի այնպիսի տեղերում, վորտեղ նորմալ շարժումը հսարավոր չե. որինակ՝ յերբ ճանապարհը քարքարոտ է, խորդու բորդ է, ցեխ և այլն. Այս նշանին հանդիպելու գեպքում նույնպես պետք և զգույշ լինել և դանդաղ արագությամբ շարժվել:

## 2. ԱՐԳԵԼԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐԻ

Արգելական նշանները լինում են շրջանաձև (կլոր) ինը զանազան արգելքի նշանակություն ունեցող տարբեր տիպարներով:

Այս նշանները դրվում են քաղաքի փողոցներում և բազմամարդ վայրերի համապատասխան արգելված տեղերում:

## 3. ՈՒՂԵՑՈՒՅՅ ՆՇԱՆՆԵՐ

Ուղեցույց նշանները լինում են քառակուսի կամ քառանկյունու ձևի, չորս տարրեր տիպարների, վարոնցից ամեն մեկը նույնպես ունի իր համապատասխան պայմանական նշանակությունը:

Այս նշանները դրվում են նույնպես քաղաքի փողոցներում և բազմամարդ տեղերում, վորոնք ցույց են տալիս փոխադրական միջոցների վարորդներին հասարակության խիստ կուտակման վայրերը՝ դպրոցների, ակումբների մոտ, փոխադրական միջոցների կանգ առնելու տեղերը և այլն:

1. ՓՈՂԱՑԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ ԿԱՆՈՆԱՎՈՐՈՒՄԸ ԶԵՂՔԻ  
ԲԱՐՁՐԱՅՈՒՄՈՎ

Փոխադրական միջոցների և հետիոտն մարդկանց  
շարժումը կանոնացնելու համար միլիցիոներն աղղա-

II Դ Ա Ռ Խ Ե

ՓՈՂԱՑԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ ԿԱՆՈՆԱՎՈՐՈՒՄԸ

Փողոցային շարժումը կանոնավորելու նպա-  
տակն եւ՝

ա) Ապահովել բոլոր տեսակի փոխադրական մի-  
ջոցների և հետիոտն մարդկանց ճիշտ և անվտանգ շար-  
ժումը.

բ) Ժամանակին վերացնել այն պատճառները, վո-  
րոնք խանգարում են փոխադրական միջոցների նոր-  
մալ յերթեկությունը.

գ) Հսկել, վոր տրանսպորտի վարորդները ճիշտ  
շահագործեն իրենց տրանսպորտն այն հաշվով, վոր նո-  
րանք տեղիք չտան խորտակությունների կամ ավարիա-  
ների:

Քաղաքում յերթեկողները (հետիոտն մարդիկ և  
փոխադրական միջոցների վարորդները) պարտավոր են  
ուշադրությամբ հետեւել փողոցային շարժումը կանո-  
նավորող միլիցիոներների ձեռքով կամ լուսաֆորով  
(լուսատու լապտերով) տրվող ազգանշաններին, փո-  
ղոցներում գրված նշաններին, ուղենշաններին և ճշշ-  
տորեն ղեկավարվել նրանցով:


Փողոցային շարժումը կանոնավորվում ե.

ա) Միլիցիոների ձեռքի բարձրացումով.

բ) Լուսաֆորով.

գ) Մուլիչներով.

դ) Հատուկ նշաններով և ուղենշաններով:



Նկ. 20

Աղ ձեռքը բարձրացրած և դեպի վեր Զախ ձեռքը բարձրացրած և դեպի վեր:

Նկ. 21

ნუმან ხ თოლეის აქა ნუ ყავა (ა), ყურები ჩამარ ნა ფარძ-  
რა გრძნოւმ ხ აღ ჰაմ პას პერებ ტელები ქერ, პერები თელ-  
ფარძობ ჩე ნოვებლო ჰილმე (ნუმე 20 ს 21):

Այս նշանի համաձայն, միլիցիոների գիմացում և  
թիկունքի կողմում շարժվող փախադրական միջւցներն  
ու հետիոտն մարդիկ կանգ են առնում, առանց փողո-  
ցի խաչմերուկի սահմանը մտնելու:

Շարժվում են միայն՝ միլիցիոների ձախից և աջից  
շարժվող փոխադրական միջոցներն ու հետիոտն մար-  
դիկ:

Դեպի մի (աջ կամ ձախ) կողմը՝ դարձում կատարելու համար միլիցիոներն ազգանշան և տալիս «կողմընթաց» շաբաթման թույլավություն ձախից յաջման կողմէն թույլավություն:

«Կողընթաց շարժման թույլավուշ  
թյուն ձախից» աղպանշան տալու համար միլիոնա-  
ներն աջ ձեռքը բարձրացնում ե դեպի վեր, իսկ ձախ  
ձեռքը կրծքի վրա, ուսերի ուղղությամբ պարզուճ ե  
դեպի աջ կողմը, թույլ տրվող շարժման ուղղությամբ  
(նկար 22):

«Կողընթաց շարժման թույլատվությունը աջից առաջ ապահովանդանը տալու համար միլիցիոնները ձախ ձեռքը բարձրացնում են դեպի վեր, իսկ աջ ձեռքը կրծքի վրա՝ ուսերի ուղղությամբ պարզում են գեպի ձախ կողմը (Նկար 23):

«Կողընթաց շարժման թույլտվությունը ձախից համաձայն, միլիցիոների ձախի կողմից շարժվող չփոխադրական միջոցները կարող են շարժմել ուղիղ և զարգացում կատարել զեպի աջ ձախ կողմը, իսկ աջ կողմից, դիմացից և թիկունքից շարժվողները պարտավորվեն կտնդ առնել:



'ԱԿ. 22


Ազդանշան—«կողմենքաց շարժ-  
ման թույլտվություն ձախից»:

Ակ. 25

Ազդանշան—«կողմբաց շարժման  
բույսություն աջից»:

Յերբ միլիցիոներն աղբանշան և տալիս «կողը թաց շարժման թույլտվություն աջեց», յիլիցիոների աջ կողմից շարժվողները կարող են շար-

ժկել ուղիղ և դարձում կատարել դեպի աջ կամ ձախ կողմը, իսկ մյուս կողմերից շարժվողները պարտավոր են կանգ առնել:



Նկ. 24

Ազգանշան—«բոլոր կողմերից շարժման արգելում»:

Յերթեվեկությունը բոլոր կողմերից կանգնեցնելու համար միլիցիոները տալիս են «բոլոր կողմերից շարժման արգելում» ազգանշանը, վորի համար նա յերկու ձեռքը պարզում են դեպի աջ ու ձախ կողմերը ուսերին հավասար (նկար 24):

Այս ազգանշանի համաձայն կանգ և առնում բոլոր փոխադրական միջոցների և հետիոտն մարդկանց շարժումը բոլոր կողմերում, առանց փողոցի խաչմերուկի սահմանը մտնելու, իսկ խաչմերուկի սահմանների ներսում գտնվողները պարտավոր են անհապաղ ազատել այդ տեղը:

## 2. ՓՈՂՅՅԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ ԿԱՆՑԱՎՈՐՈՒՄԸ ԼՈՒՍ-ՖՈՐՆԵՐԻ (ՍՎԵՏՈՅՈՐՆԵՐԻ) ՄԻԶՈՅՈՎ

Լուսաֆոր կոչվում են հատուկ ձեր լուսեղեն ազդանշանային սարքավորում, վորով դիշեր ու ցերեկ կանոնավորում են փողոցային շարժումը, փոփոխակի վառվող և զանազան գույնի ապակիներ ունեցող լուսատու լամպերով:

Լուսաֆորները զնում են փողոցների խաչմերուկների կենտրոններում, հրապարակներում և ընդհանրապես այն տեղերում, վորտեղ տեղի յե ունենում փոխադրական միջոցների և հետիոտն մարդկանց ինտենսիվ ուժեղ յերթեվեկությունը:

## ԼՈՒՍԱՖՈՐԻ ԱԶԴԱՆՇԱՆՆԵՐԸ ԹԵՎ ՆՐԱՆՑ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- ա) Կանաչ լույս.—Ճանապարհն ազատ ե:
- բ) Կարմիր լույս.—Ճանապարհը փակ և փոխադրական միջոցների և հետիոտն մարդկանց համար:
- գ) Դեղին լույս.—Ուշադրություն և շարժումը կանգ և առնում բոլոր կողմերում:

Փոխադրական միջոցների վարորդներն ու հետիոտն մարդիկ դեղին լույսի դեպքում պարտավոր են կանգ

առնել առանց խաչմերուկի սահմանը մտնելու, իսկ  
խաչմերուկի սահմանում գտնվողները պարտավոր են  
են շուտ ազատել այդ տեղը:

### 3. ՓՈՂԱՅՈՒՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ ԿԱՆՈՆԱՎՈՐՈՒՄԸ ՍՈՒԼԻՇՆԵՐՈՎ

Սուլիշներով փողոցային շարժումը կանոնավոր-  
վում ե այն գեղքում, յերբ մոտթ կամ մառախուղ ե,  
փորի հետևանքով ձեռքի ազդանշանները յերթելեկող-  
ներին տեսանելի չեն, և այն գեղքում, յերբ յերթելե-  
կողները ուշադրություն չեն դարձնում ձեռքի կամ լու-  
սաֆորի ազդանշաններին, նույնպես և յերբ խախտում  
են շարժման կարգը:

**ՍՈՒԼԻՇՈՎ. ԱԶԴԱՆՇԱՆՆԵՐԸ ՏՐՎՈՒՄ ԵՆ ՀԵՏԵԼՑԱՆ  
ՁԵՎՈՎ**

- ա) «Կանգ առ».—մեկ յերկարատե սուլոց.
  - բ) «Կողընթաց շարժման թույլատրություն».—  
յերկու կարճ և ընդհատ սուլոցներ
  - գ) «Աւշադրություն»—մեկ կարճ սուլոց:
- 

### III Գ. Լ. Ռ Խ Խ

#### 1. ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ՅԵՐԹԵՎԵԿԵԼ ՔԱՂԱՔՈՒՄ

Բոլոր տեսակի փոխադրական միջոցների շարժումը  
կտտարկվում ե փողոցի, ճանապարհի աջ կողմով, մայթին,  
ճանապարհի յեղին մոտիկ, իրար հետեւից մեկ շարքով  
և միմյանցից վորոշ հեռավորության վրա, ըստ վորում  
նրանց միջև պահանջվող հեռավորությունը կտխված  
ե նրանց շարժման արագությունից. վորքան շարժումն  
ավելի մեծ արագությամբ է կատարվում, այնքան ավելի  
մեծ հեռավորություն պետք ե լինի միմյանց միջեվ,  
այն հաշվով, վոր յեթե առջևից շարժվող մեքենան կանգ  
առնի, հետեւից շարժվողը հնարավորություն ունենա-  
նույնպես կանգ առնելու ասացինից 4—5 մետր հեռա-  
վորության վրա\*):

Քաղաքի սահմաններում յերթելեկելին, ավտո-  
մոտո-մեքենաների վարորդները պետք ե լավ իմանան  
յերթելեկության համար սահմանված բոլոր կանոնները,  
զեկավարվեն փողոցային շարժումը կանոնավորող մի-  
լիցիոններին յուցմանքներով, ճանապարհային-առ-  
գարարական նշաններով ու ուղենշաններով և պարտա-  
գոր են իրենց մեքենաները վարել ամենալուրջ ուշա-  
դրությամբ և զգուշությամբ:

Շատ հաճախ ավտո-մոտո-մեքենաների վարորդները  
մուանում են այն ավարիանների ու դժբախտ պատահար-  
ների. մասին, վորոնք կարող են ամեն մի վարկանն  
գտանգիյններութարկել քաղաքացիների կյանքը և խորտա-

\*.) Շարժման ժամանակ մարդատար մաքենաները միմյանցից առ-  
նվազն պետք ե լինեն 50 մետր, իսկ բանատար մեքենաները 50  
մետր հեռավորության վրա.


կել մեծ դժվարությամբ ձեռք բերված թանկարժեք  
ավտոմեքենաները:

Ավարիաներն ու զժբախտ պատահարները մեծ մասամբ տեղի յեն ունենում փողոցների խոչընթառութեաների տեղերում, անկյուններում, վոլորաններում, կամուրջների վրա և հասարակության կուտակման այլ վատահարներում:


Վերոհիշյալ վայրերով անցնելու ժամանակ շո-  
փերը պետք ե զգաստ և զգուշ լինի. Նախքան այդպի-  
սի վայրերին հասնելը նա պետք ե ձեռք առնի ըոլոր  
նախազգուշական միջոցները. Եթ մոտենալու մասին  
ժամանակին ձայնական աղդանշան տալով, նախազգու-  
շացնի մյուս գործադրական միջոցների վարորդներին  
ու ճետիոտն մարդկանց, դանդաղեցնի իր մեքենայի  
(կառքի) շարժման ընթացքը և զգուշությամբ անցնի  
այն տեղերը, գորտեղ ավտոմոբիլների շրմ-  
ման արագությունը մեկ ժամում 10 կիլոմետրից ավե-  
լի չպետք ե լինի:

Փողոցների խաչմերուկների տեղերում, անկյուններում դարձումներ կատարելիս, դաշտի գոներում, նրբանցներում և դաշտաները մտնելու, նրանցից գուրս գալու ժամանակ պետք է շարժվել ամենադանդաղ ընթացքով (քայլով), անպայման ձայնական ազդանշան տալով:

Յերբ փողոցի խաչմերուկի վայրում անսպասելի  
կերպով յերկու մեքենաներ են դուրս գալիս միմյանց դի-  
մաց և յերբ նրանք կարում են մեկը մյուսի ճանապարհը  
և արդեն այնքան են մոտեցել միմյանց, վոր կանգ առ-  
նելու վոչ մի ճնարավագրություն չկա, իսկ դրա հետե-  
վանքով՝ ավտո-մեքենաները պիտի և անխուսափելիո-  
րեն ընդհարվեն միմյանց հետ, այդ դեպքում՝ պատա-  
հարից խուսափելու համար, ամեն մի շոփեր պարտա-



Ընդհանրապես փողոցների խաչմերուկների տեղերում շարժման առաջնության իրավունքը պատկանում է ոելսավոր տրանսպորտին (տրամվային), իսկ մասցած գեպարեում աջից շարժվող տրանսպորտին:



Vb. 25


Փողոցի՝ խաչմերուկուս յերկառ պատմենքնաներ անսպատիլի կերպակ իրար համիդապել եմ յեվ պատահարը համարյա անխուսափելի յեպատահարից խուսափելու համար յուրաքանչյուր շնորհ իր մեթե նոն ուսումնելու եղանակի իր աջ կողմի փողոցը:

Յան դարձել ե դեպի իր ազ կողմի փողոցը:

Յուրաքանչյուր փոխադրական միջոցի վարորդ  
խաչմերուկի վայրում պարտավոր և ճանապարհ տալ  
առաջին հերթին իր աջից շարժվող տրանսպորտին:

**ԱՐԴՅՈՒՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ**.—Մարդաբանութեան գիտական ձևակառքերն

ու սայլերը ճանապարհը զիջում են  
ավագանութուանսառտին:



Ակ. 26

Փազցի խաչմերուկի վայրամ զանազան փառոցներից յեկոյ № 1 յել № 2 մեհետաները կտրում են մեկը մյուսի նաև սպարեք այսուղեք № 2 ավտոմեհետան կանգ ե տոել յել բոյլ ե տիել առաջ անցնելու իր առջելից շարժվող № 1 ավտոմեհետային:

Հրշեց, շտապ ոդնության, շտապ տեխնիկական սպնության և միլիցիական ավտոմեքենաները կարող են առաջ անցնել բոլոր տեսակի տրանսպորտից առաջ փողոցների կամ ճանապարհների ամեն տեղերում, ըստ վորում բոլոր մյուս տեսակի արանսպորտի ովարորդները պարտավոր են նրանց ճանապարհ տար:

Ավտոմուտ փոխադրական միջոցների վարորդները յերթեկներության ժամանակ լուրջ ուշադրությունը պետք է դարձնեն տալիս, և միայն դրանից հետո զգուշությամբ անցնեն դրանց մոտով:

Միուսն յերթեկնեկողներին, նախաքան նրանց հասնելը պետք է նախորոք նախազգուշացնել ձայնական ազդանշան տալով, և միայն դրանից հետո զգուշությամբ անցնեն դրանց մոտով:

Զափազանց վտանգավոր ե, յերբ փոխադրական միջոցների վարորդները մոտենում են հետիւոտն յերթեկներին և մոտեցած վարկանին միայն ազդանշան են տալիս. այսպիսի գեղքերում նրանք սարսափեցնում են հետիւոտն մարդկանց, զորոնք կարող են շփոթվել և ճանապարհից դուրս գալու փոխարին, շբժվել հակառակ կողմը և ընկնել ավտոմեքենայի կամ այլ փոխադրական միջոցի տակը:

Միաժամանակ հատուկ ուշադրություն գետք և դարձնել յերեխանեցի և հարբած մարդկանց վրա, յերբ նրանք շարժվում են փողոցի քարահատակով. նախ քան նրանց մոտենալը, պետք է ձայնական ազդանշան տալ, դանդաղեցնել շարժման արագությունը և զգուշությամբ անցնել նրանց մոտով. յեթե այդպիսիները չեն ազատում ճանապարհը, փոխադրական միջոցների վարորդները պարտավոր են կանգ առնել:

Յերթեկնեկության ժամանակ պետք է ժամանակին ձայնական ազդանշաններ տալ ներքոհիշյալ վայրերին դեռ չհասած, առնվազն 30 մետր հեռավորության վրա.—

1. Ճանապարհի վոլորաններին (բոլորումներին) մոտենալիս.

2. Փողոցների կամ ճանապարհների խաչմերուկներին մոտենալիս.

3. Գարաժներից, դարպաններից և նրբանցներից դուրս գալիս և մտնելիս.

4. Առջեւում գնացող փոխադրական միջոցների առաջն անցնելիս.

5. Դիմացից յեկող փողաղրական միջոցներին հանդիպելիս.

6. Դոկտորներին, ակումբներին և հասարակության խիտ կուտակման այլ վայրերին մոտենալիս.

7. Փողոցի քարահատակով շարժվող հետիուն մարդկանց մոտենալիս.

8. Ավառումեքենան տեղից (առաջ կամ հետ) շարժելիս.

9. Յերբ առջեռմ ճանապարհը 50 մետրից ավելի տեսանելի չի:

Արգելվում ե ավտո-մոտո-մեքենաների վարորդներին յերթեկել հետվայլ դեպքերում.—

ա) Յերբ արգելակները սարքի չեն.

բ) Առանց հաշվառման համարի.

տ) Առանց ազդարարական սարքավորման.

դ) Յերբ դեկը 1—10 պտույտից ավելի լուսից (տատանում) ունի:

ե) Առանց լուսավորության (մութ կամ թանձր մառախուղի ժամանակի).

զ) Խախուտ ակներով.

է) Իշած (առանց ողի ) շիներով.

ը) Յերբ ուղիւատորը կաթում ե.

թ) Ավտո-մեքենան կեղտոտ վիճակում ե.

ժ) Խացուցիչ չունի.

ի) Յերբ մեքենան (կառքը) ներկած ե կարմիր գույնի.

լ) Առանց թափքի (կուզովի)

մ) Յերբ աշխատելիս ծուխ ե հանում.

դ) Առանց «կանգ առ» (ստոպ) ազդանշանի.

Ավտո-մոտո-մեքենաների վարորդը աշխատանքի դուրս դալիս պետք ե իր սուս միշտ ունենա իր արհեստով զբաղվելու իրավունքի վկայականը և ուղեգիրը (պուտայովկա):

Խստիվ արգելվում ե ավտո-մոտո-մեքենաների վարորդներին՝

ա) Տրանսպորտը վարել հարթած վիճակում.

բ) Ղեկը հանձնել վարելու իրավունք չունեցող այլ անձանց.

տ) Տրանսպորտը վարելիս ուտել կամ ծխել.

դ) Կողքին մեկ հոգուց ավելի մարդ նստեցնել:

## 2. ԱՎՏՈ-ՄՈՏՈ-ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՎԱՐՈՐԴՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԶԵՐՔՈՎ ՏՐՎՈՂ ԱԶԴԱՆՇԱՆՆԵՐԻ ԿԱՐԳԸ

Ավտո-մոտո-տրանսպորտի վարորդների կողմից ձեռքով տրվող ազդանշանները նույնպես խոզը նշանակություն ունեն յերթեկությունն անվտանգ դարձնելու գործում:

Չնայած նրան, վոր այդ ազդանշանները շատ հասարակ են, այնուամենայնիվ կարելի յե ասել, վոր մինչև որս մեր ավտո-մոտո-տրանսպորտի վարորդների մեծ մասը չգիտի այդ նշանների բուն նշանակությունը և նրանցով գործելու կարգը, վորի հետեանքով տրանսպորտի վարորդները հաճախակի շփոթության մեջ են գցում թե յերթեկությունը կանոնավորող պոստապահ միլիցիոներներին, և թե հենց տրանսպորտի վարորդները մեկը մյոււին:

Ճիշտ և անվտանգ յերթեկելու համար, յուրաքանչյուր մեխանիկական տրանսպորտի վարորդ պարտավոր ե լավ իմանալ տրանսպորտի վարորդների կողմից ձեռքով տրվող ազդանշանների նշանակությունը և նրանցով գործելու կարգը:

Ավտո-մոտո-տրանսպորտի վարորդների կողմից ձեռքով տրվող ազդանշանները հետեալներն են՝

ա) Զախ դար ձում.

բ) Աջ դար ձում.


- դ) Դանդաղեցրու.  
է) Կանգառու.

Այս սահմանված ձեփ ազդանշանները ավտոմոտոտրանսպորտի վարորդները տալիս են՝  
ա) Աջ կամ ձախ դարձում կատարելիս.  
բ) Շարժման արագության ընթացքը դանդաղեցնելիս.  
շ) Կանգառում առնելիս.

### ԱՎՏՈ-ՄՈՏՈ-ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՎԱՐՈՐԴՆԵՐԸ ԶԵՐՔՈՎ ԱԶԴԱՆՇԱՆՆԵՐ ԵՆ ՏԱԼԻՄ ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱՐԳՈՎ

«Ձախ դարձում»—ձախ ձեռքը ուսին հավասար պարզում ե դեպի դարձման կողմը, ձեռքի ափը դեպի առաջ ուղղած (նկար 27);

Աջ դարձում.—ձախ ձեռքն իջեցնում ե ներքե, մատները գեանին ուղղած, իսկ ձեռքի ափն ուղղած դեպի առաջ և փոքր շարժումներ ե անում վեր ու վար (նկար 28);




Նկ. 27  
Հայու դարձում




Նկ. 28  
Աջ դարձում

Դանգաղեցրու.—ձախ ձեռքը ուսին հավասար պարզում ե դեպի ձախ կողմը, ձեռքի ափը դետնին ուղղած և փոքր շարժումներ ե անում վեր ու վար (նկ. 29);

Կանգառու.—Զախս ձեռքը դուրս ե հանում մեջնայից և բարձրացնում ե դեպի վեր (նկար 30);



Նկ. 29  
Դանգաղեցրու



Նկ. 30  
Կանգ առ

«Ձախ դարձում» ազդանշանը տրանսպորտի վարորդը պետք է տա այն ժամանակ, յերբ նա ցանվարդում ե իր մեքենան (կառքը) դարձնել դեպի ձախ կանում և կամ մեքենան (կառքը) դարձնել դեպի ձախ ափը պետքում, յերբ վարորդը մոտենում է փողոցի խաչում դեպի կամ առնկյուններին, նախքան մերժությունը առնանձնին կամ անկյուններին, նախքան մեքենան (կառքը) դարձնելը, մյուս կողմից շարժվող փողոցի ական միջոցներին և նետիուն մարդկանց պետք ե նախազգուշացնի ձայնական ազդանշան տալով, դանց դադեցնի շարժման ընթացքը և ձեռքով սահմանված ազդանշան տա:

Ցեֆի ճանապարհի վրա վորեւ արգելք չկա, դանց դադեցը ընթացքով մեծ կոր գծով դարձնում ե իր մեքենան (կառքը) դեպի ձախ:

«Աջ դարձում» ազդանշանը տրանսպորտի վարորդը պետք է տա այն ժամանակ, յերբ նա ցանկանում ե իր մեքենան դարձնել դեպի աջ, այս դեպում նա պարտավոր ե ձեռքով ազդանշան տալ—«աջ դարձում», նույնպես դարձում կատարելուց առաջ նախազգուշացնել ձայնական ազդանշան տալով:

թե աջ և թե ձախ դարձումները պետք ե կատարել ամենադանդաղ ընթացքով (քայլով):

«Դանդաղ եց բու» ազդանշանը պետք ե տալ յերբ տրանսպորտի վարորդը դանդաղեցնում է իր մեքենայի շարժման ընթացքն այն նպատակով, վոր հետեւից շարժվող տրանսպորտի վարորդները նախազգուշանան և ընդհարվեն միմյանց հետ:

«Կանգ առ» ազդանշանը պետք ե տալ կանգ առնելիս:

### 3. ՓՈԽԱԴՐԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԻՄՅԱՆՑԻՑ ԱՌԱՋԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Փոխադրական միջոցներին միմյանցից առաջ անցնել թույլատրվում է միայն ձախ կողմից, իսկ տրամվայի աջ կողմից:

ՃԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Այն տեղերում, վորտեղ հնարավոր չետքամվայի աջ կողմից առաջ անցնել թույլատրվում է առաջ անցնել տրամվայի ձախ կողմից, յերբ առաջ անցնողը (ավտո-մատո-մեքենայի վարորդը) համազգած կլինի, վոր դիմացից յեկող տրամվայ կամ այլ խոչընդոտ չկա:

Միմյանցից առաջ անցնելու դեպքում, տրանսպորտի վարորդը պարտավոր է իր առջեւ շարժվող տրանսպորտի վարորդին նախորոք նախազգուշացնել ձայնական ազդանշան տալով, և ապա առաջ անցնել, առանց սահմանված արագությունից բարձր արագություն գարգացնելու:

Խստիվ արգելվում է առաջ անցնել ամեն տեսակի տրանսպորտից:

ա) Փողոցների խաչմերուկների վայրերում.


բ) Վալորաններում.

գ) Տրամվայի և ավտոբուսների կանգ առման կետերում.

դ) Կամուրջների վրա.

յե) Նեղ և խորդ ու բորդ ճանապարհներում.


զ) Այն տեղերում, վորտեղ ճանապարհը լավ տեսանելի չի, այլև յերբ առջեւից գնացող տրանսպորտի վարորդների կողմից նախազգուշական ազդանշաններն են տրվում:



Նկ. 81

Փազացի Խաչմերուկի սահմանում առջեվից գնացած մեքենայից առաջ անցնած շափերը չի տեսնում իր աջ կողմանից փազացի յեկալ ավտո-մեքենան, վորք կտրում և նրա նախապարելը. այս դեպքում յերկու ավտո-մեքենաներն անշահարացու կրմակարվեն միմյանց ենու յել պատահարը համարյա անխուսափելի յե:

Տրամվայի կանգառում կետերում կանգ առաջ ժամանակ, տրամվայի հետեւից շարժվող բոլոր տեսակի փոխազդական միջոցները պարտավոր են կանգ առնել վորտեղ ճանապարհ 4—5 մետր հեռավորության վրա. այդ փորտրամվայից 4—5 մետր հեռավորության վրա. այդ փորտրամվայի միջոցների շարժումը կարելի յել վերական միայն տրամվայի շարժումից հետո:



Նկ. 32

Նույնօք՝ վալորանում առաջ անցնող շոփերը չի դիսում դիմացից յեկադ մեթեան, վորք տնտեսակի դուրս է յեկել օրա դիմաց. այսուղ պատահան տեխնուսափելի յէ:


Տրամվալի այն կանգառման կետերում, ուր ուղեորդների սպասելու համար սպատրաստված տեղեր (պլրշագկա) կան, վագոնի կանդ առած ժամանակ անոնելու փոխադրական միջոցները կարող են առաջ անցնել առանց կանդ առնելու, բայց դանդաղեցրած ընթացքով ու իրենց մոտենալու մասին նախազգուշացնելով ձայնական ազդանշան տալու միջոցով:

Ցեթե տրամվայը կանդ և առնում յերկար ժամանակ՝ ավարիաների կամ այլ փոքր նորոգումների հետևանքով, ապա անոնելու փոխադրական միջոցները իրենց շարժումը կարող են վերսկսել միայն տրամվայի ուղեորդների յել և մուտքը դադարելուց հետո:

Հրշեց մեքենաները, շոտապ ովնության, միլիցիական և շոտապ տեխնիկական ովնության մեքենաներն անցնում են տրամվալի և ավտոբուսների կանդ առման կետերը դանդաղեցրած ընթացքով և ձայնական աղդանշան տալով:

#### 4. ԻՆՉՈՐԵՍ ՊԵՏՔ Ե ԿԱՆԳՆԵՑՆԵԼ ՏՐԱՆՍՊՈՐՏԸ

Փողոցում կանդ առնելիս՝ տրանսպորտի վարորդը միշտ պետք է իր մեքենան (կառքը) կանգնեցնի աչկողմում, մայթին մոտիկ, շարժման հոսանքի ռւղղությամբ, առանց խափանելու տների մուտքերի, գարնանցների, նրբանցների յել և մուտքը, տրամվայի և ավտոբուսների կանգառումները: (Նկար 33):




Նկ. 33

Մեթեանները նիշտ կանգնեցված են փողոցի աջ կողմում, մայթի հետ գույքանելու յել շարժման հոսանքի ուղղությամբ, առանց խափանելու գարքասի յել յել մուտքը:

Միլիցիաների ազդանշանով կամ վերկե այլ խոչնույնանքով կանդ առնելիս, տրանսպորտը պետք է կանգնեցնել այնպես, վոր չխանգարվի մցուս պետք և կանգնեցնել այնպես, վոր չխանգարվի մցուս փոխադրական՝ միջոցների շարժումն ու հետիւնուն յերթեան փոխադրական՝ միջոցների շարժումն ու հետիւնուն յերթեան:

վեկությունը, իսկ փողոցի խաչմերուկի սահմանների մոտ տրանսպորտը պետք է կանգնեցնել այնպես, վոր նրանք փողոցի անկյունի շենքերի ճակատի գծից դուրս չգան, այսիւքն առանց խաչմերուկի սահմանը մտնելու (նկ. 34.)։



Նկ. 34

Մեմբնան նիշտ ե կանգնեցրած փողոցի խաչմերուկի սահմանի մաս, տուանց խաչմերուկի սահմանը մտնելու։

Փողոցներում կամ այլ տեղերում փոխադրական միջացները պետք ե կանգնեցնել մեկը մյուսի հետևից մեկ շարքով, իրարից վորոշ հեռավորության վրա։

Արգելվում ե փոխադրական միջացները կանգնեցնել։

ա) փողոցների խաչմերուկների սահմաններում.  
բ) վորաններում.

գ) կամուրջների վրա և նեղ փողոցներում,  
վորտեղ կանգ առած տրանսպորտը կխաճարի մյուս  
տրանսպորտի և հետիւն մարդկանց շարժումը։

Ավտո-մոտո-տրանսպորտը կանգ առած ժամանակ  
պետք ե անպայման ձգած լինի ձեռքի արգելակը (տոր-

մողը), և այդպիսին կարելի յե ազատ արձակել միայն մեքենան տեղից շարժվելու դեպքում։

Յերբ տրանսպորտի վարորդը հեռանում ե մեքենայից, պետք ե դադարեցնի մոտորի (շարժիչի) աշխատանքը, անջատի ելքտրականությունը այդ նպատակի համար յեղած հատուկ բանալիով և բանալին վերցնի իր հետ։

Վայրեցքներում ե յերթևեկության խիտ վայրերում արգելվում ե տրանսպորտի վարորդներին հեռանալ մեքենայից, թողնելով մեքենան առանց հսկողության։

### 5. ԳԻՇԵՐԱՅԻՆ ՅԵՐԹԵՎԵԿՈՒԹՅՈՒՆ

Գիշերային յերթեկությունը հատուկ ուշադրություն է պահանջում ավտո-մոտո-տրանսպորտի վարորդներից։


Լապտերները (ֆառերը) լուսավորում են ձանապարհի միայն մի փոքր մասը ավտո-մեքենայի առջևի վում, իսկ մեքենայի կողմերում յեղած տարանությունը մնում է մթության մեջ։

Խորտակումներից ու դժբախտ պատահարներից խուսափելու համար պետք ե մեքենան շարժել վորքան հանարակոր ե, ձանապարհի յեղներից հեռու, փողոցների խաչմերուկներին մոտենալիս, պետք ե ժամանակին մարել մեծ լույսերը, ազդանշան տալ և դանդաղեցնել շարժման ընթացքը. գիշեր ժամանակ անվտանգ լորթեկելու համար, ուրիշ մեքենայի հանդիպելիս, ամենից կարերը լապտերների ուժեղ լույսերի մարումն ե։

Գիշերային յերթևեկության ժամանակ մեծ մասամբ խորտակումներն ու դժբախտ պատահարները տեղի յեն ունենում այն գեղքերում, յերբ դիմացից շարժվող մեքենայի լապտերների ուժեղ լույսերը շացնում են


հանդիպող մեքենայի շոփերի աչքերը։ Շատ հաճախ ուժեղ լույսերի հանդիպող շոփերի աչքերն այնպես են շլանում, վոր նա այլևս վոչինչ չի տեսնում, և դրա հետևանքով նա չի կարողանում տանել իր մեքենան այն ճանապարհով, վորով պահանջվում եւ։

Եեթե հանդիպող (յեկաղ) մեքենան չի հանդցնում մեծ լույսերը, ապա գնացող մեքենայի վարորդը պետք է կանգ առնի և իր լույսերը մարի ու սպասի, մինչե վոր յեկողն անցնի իրենից. գնացողն իր լապտերների լույսերը պետք ե վասի այն ժամանակի յերբ հանդիպող մեքենայի շոփերն արդեն անցել ե իր լապտերների լույսի ներգործման սահմանից։



Նկ. 35

Մեծ լույսերը վասել են համդիպաղ մեխենայի շոփերի տեսազույքի պաշտի սահմանում, նաաապայրները շլանում են համդիպող շոփերի աչքերը յեկ նամապարհ անտեսնելի յե դառնաւմ նրա համար։



Նկ. 36

Լապտերների մեծ լույսերը վառված են համդիպաղ մեխենայի շափերի լապտերների մեջ լույսերը, զբանով կլացնի իր դիմացից յեկող մեքենայի շոփերի աչքերը. այս դեպքում կատաստրոֆան (աղետը) անխուսափելի կլինի։

Յեթե գնացողն ել ժամանակից շուտ վասի իր լապտերների լույսերը, զբանով կլացնի իր դիմացից յեկող մեքենայի շոփերի աչքերը. այս դեպքում կատաստրոֆան (աղետը) անխուսափելի կլինի։

Քաղաքում և բազմամարդ վայրերում լուսավորված փողոցներում պետք ե վասել միայն լապտերների վոքը լույսերը. իսկ չլուսավորվող ճանապարհներում, յեթե հանդիպող մեքենաներ (կառքեր) չկան, կարելի յե վասել բոլոր լույսերը։


Վախենու անասուններին հանդիպելու դեպքում, նույնպես պետք ե մարել լույսերը։

## 6. ԲՈՒՔԱՍԻՐՈՒՄԸ

Բուքսիրման ժամանակ պարանը պետք ե կապել այնպես, վոր քաշող մեքենայի հանկարծակի կանգառ-

ման ժամանակ հնարավոր լինի բուքսիրվող մեքենան դարձնել դեպի մի կողմը՝ միմյանց հետ չընդհարվելու համար:

Դրա համար պարանը պետք է կապել քաշող մեքենայի հետեւի մասի ձախ կողմից, իսկ բուքսիրվող մեքենայի առջևի մասի աջ կողմից. շարժվելու ժամանակ վոչ մի դեպքում չի կարելի անիմներով տրորել պարանը կամ քշել պարանի վրայով, այլ պետք է պարանը ձգել և, վրոքան հնարավոր է, պարանը պահել ձգված դրությամբ, հակառակ դեպքում քաշող մեքենան հաճախ ուժեղ կերպով կցնցի բուքսիրվող մեքենան. այդ հանգամանքն իր հերթին յերկու մեքենաների վրայել վատ կանդրադառնա և բացի դրանից պահան ել կկտրվի:



Նկ. 37

Պարանը տեսանելի գարմանու համար նրա վրա լարեր  
և կապած:

Բուքսիրման ժամանակ պարանը հաճախ տեսանելի չի լինում մյուս շոփերների համար, և նրանք,

չտեսնելով պարանը, կարող են իրենց մեքենաները քշել բուքսիրվող և բուքսիրող մեքենաների միջով, վորի հետևանքով տեղի կունենա նոր ավարիա. դրանից խուստիելու համար, պարանի վրա պետք է կապել՝ ցերեկը աչքի ընկնող վառ գույնի լաթեր, իսկ գիշերը՝ սպիտակ գույնի լաթեր:

## IV Գ Լ Ո Ւ Խ

## 1. ՅԵՐԹԵՎԵԿՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԻՑ ԴՈՒՌԸ

Քաղաքից դուր յերթեեկելիս ավտո-մոտո-տրանսպորտի վարորդները ամենալուրջ ուշադրություն պիտք են դարձնեն լեռնոտ և ժայռոտ ճանապարհների վրա:

Անդրկովկասը Խորհրդային Միության մեջ լեռնոտ յերկրներից մեկն են հանգիսանում, և Անդրկովկասում գոյություն ունեցող անոնչը հաղորդակցության հանապարհները համարյա թե  $100^{\circ}/\text{o}$ -ով անցնում են լեռների վրայով և ժայռերի միջով. հետևապես, այդպիսի ճանապարհներով յերթեեկելիս, ավտո-մոտո-տրանսպորտի վարորդները ովտաք են շատ զգաստ և ուշադիր լինեն:


Տրանսպորտի խորտակումները և դժբախտ պատահարները տեղի յեն ունենում յեռնային ճանապարհներում, գլխավորապես վոլորաններում ու վայբեջք-

Ի միջի այլոց կարելի յե ասել, վոր ժամանակակից շոփերների մեծ մասը, վոլորաններով կամ զառիթափ վայրեջներով ու վերելքներով յերթեեկելիս, բավարարվում են միայն զեկանովը պտտեցնելով և արգելակելով, առանց հաշվի առնելու, վոր յուրաքանչյուր վոլորան, վայրեջք կամ վերելք պտհանջում են անցնել համապատասխան կանոններով:

Վոլորաններով անցնելիս ամենից վտանդավոր են յերբ մեքենայի հետևի անիջմերը սայթաքում են (զանոս), գլխավորապես ճանապարհը ձյունով ծածկված կամ թաց ժամանակ. այդպիսի զեղքերում պատահարը շատ հարժանաւագիտելի յե լինում, վորի հետևանքով մեծքանակությամբ ավտո-մեքենաներ են խորտակվում:

Վոլորաններով անվտանգ յերթեեկելու համար, ավտո-մոտո-տրանսպորտի վարորդները, վոլորաններին համեմատ առաջ, պետք են դանդաղեցնեն իրենց մեջենացի շարժման արագությունը, շարժմեն ճանապարհի աջ կողմով, զգուշությամբ և ազդանշան տալով անցնեն վոլորանները, վորից հետո միայն կարելի յե ազատ շաբունակել յերթեեկությունը:

Վոչ մի գեղքում չի թույլատրվում վոլորաններում, այլև վերելքի գագաթում առջևից գնացող փոխազրտական միջոցներից առաջ անցնել:



Նկ. 38

Վոլորանում մեթեման շարժվում են ժամապարեի ձախ կողմով, վորի հետեւանքով շափերը չի տևման դիմացից յեկող մեթենան. այս դեպքում պատահարն ամխուսափելի յե:

Եեռնային, ժայռուտ ճանապարհներով, նաև զառիթափ վոլորաններով, վայրեջքներով ու վերելքներով անվտանգ յերթեեկելը կախված ենաև մեքենայի տեսակից. Վորքան ավտո-մեքենան կարմ և ուժեղ լինի, այնքան ավելի հեշտ կլինի ամեն տեսակի զառիթափ վոլորաններով ու վայրեջքներով յերթեեկելը, իսկ մեծ մեքենայով այդպիսի ճանապարհներով անվտանգ յերթեեկելը՝ նույնիսկ հմուտ շոփերի համար, բավականին դժվար գործ ե:

Պետք ե աշխատել, վոր ավտո-մեքենան վոլորաններում ու վայրեջքներում շարժվի առանց կանգառումների:

Ուղիղ ճանապարհներում կարելի յե յերթեկել առանց արագությունները փոփոխելու, իսկ վոլորաններում, վայրեջքներում ու վերելքներում պահանջվում ե ժամանակին արագությունը փոփոխել առանց կանգառումների այն հաշվով, վոր արագությունը փոփոխելու ժամանակ ավտո-մեքենան չկորցնի իր իներցիան և կանգ չառնի:

Հակառակ դեպքում մեքենան կանգ առած տեղից առաջ շարժելը վոլորանում կամ վերելքում դժվար կլինի, և մեքենան կարող ե դեպի հետ շարժվել, այս դեպքում դժվար կլինի խուսափել նաև դժբախտ պատճառից:

Յեթե ավտո-մեքենան շարժվում ե սարն ի վեր, և առջելը վոլորան կա, նուխ քան այդ տեղերին հասնելը, պետք ե ցածր արագություն դցել (2-րդ կամ առաջին արագությունը), վորպեսզի ավտո-մեքենան վոլորանում կամ վերելքում կանգ չառնի և չսկսի հետ շարժվել:

Նոյնպես պետք ե վարպել զառիթափ վայրեջքներին մոտենալիս:

Յեթե մեքենան արագ ե շարժվում և ժամանակին արագությունը չի դանդաղեցվում, ապա միանգամից

արգելակելուց կամ զարձում կատարելուց մեքենան կսայթաքի, և խորտակումը նույնպես անխուսափելի կլինի:

Նկատի ունենալով Եեռնային ճանապարհների վոլորանների դժվարությունները, շոփերը վոլորաններում պետք ե իր ձեռքը չհեռացնի դեկի անկվից: Դրա համար ամենակարևորն ե փոխել արագությունը նախքան վոլորաններին հասնելը, վորպեսզի վոլորաններում դրա համար ձեռքերը չհեռացնի դեկանիվից:

Կտրուկ (սուլը) վոլորաններով անցնելիս անհրաժեշտ ե, համարավոր յեղած սահմաններում, ավտո-մեքենայի առջևի ակները դարձնել դեպի մի կողմը մինչև վերջը:

Յերբեմ լինում են դեպքեր, յերբ վոլորանն անցնելու համար պահանջվում ե մեքենան դեպի հետ շարժել. այսպիսի դեպքերում վոլորանն անցնելն ավելի փուանգավոր ե, քան առջևի անիվերը մինչև վերջը դեպի մի կողմը (դառնալու կողմը) դարձնելը:

Վոլորաններում, զառիթափ (ուղղորդ) իջնող ճանապարհներում ե վերելքներում ձայնտկան ազդանշաններ ավելի, ճանապարհի ձախ կողմը չանցնեք և ձեր առջևից գնացող մեքենաներից առաջ չանցնեք:

Ծեթե ճանապարհի վերելքներում կամ վոլորաններում մեքենան սկսում ե հետ գնալ և կտնզնեցնելու համարավորություն չկա, պետք ե աշխատել մեքենան ուղղել ճանապարհին յեղած հողակույտերին, պատերին և այլ խոչնդուսներին, ակները քսել այդ խոչնդուսներին, վորպեսզի ավտո-մեքենան իներցիա չզարգացնի, այլ կանգ առնի, հակառակ դեպքում պատճառին անխուսափելի յե:

## 2. ՅԵՐԱՔԵԿՈՒԹՅՈՒՆԸ ԹԱՑ ՅԵՎ ՍԱՅԹԱՔՈՒՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ

Թաց և սայթաքուն ճանապարհներով պետք է շարժվել ամենալուրջ ուշադրությամբ, վորովհետեւ թաց և սայթաքուն ճանապարհներով շարժվելիս մեքենան քիչ և շաղկապում ունենում գետնի, հետ, քան չոր ժամանակ:

Յեթի հանապարհը թաց է կամ ծածկված է յուռական՝  
սառուցով, վորի հեականքով մեքենան լավ չի շաղա-  
կապվում գետնի հետ, ավտոմեքենան հաճախ կարող  
է սայթաքել և վորոշ տարածություն անցնել իներ-  
ցիայի շնորհիվ սահելով, չնայած նրան, վոր ակները  
կարող են արգելակած լինել և չստուգել:

Խոնավ և սայթաքուն ճանապարհներով յերթե-  
վեկելիս պետք է հետեւ, վոր արգելակները ճիշտ կա-  
նոնավորված լինեն այն հաշվով, վոր արգելակները  
ձգելու ժամանակ բոլոր ակները կանգ առնեն միաժա-  
մանակ:

Արգելակելու դեպքում, արգելութեց սկսած և շատ սահուն տար, առանց շաղկապման մի խանիվը (կանուսը) անջատելու, յեթէ մեջենայի արգելակումը տեղի յեռնենում ընթացքը դանդաղեցնելու և վոչ թէ մեջնան բոլորովին կանգնեցնելու համար:

Արդելակները կարելի յեւ ստուգել հետեւայ ձևով՝

Ավտոմեքենայի հետեւ մասը բարձրացնել դամ-  
կրատի վրա, շարժիչն աշխատեցնել և վորեն արագու-  
թյուն զցել. յերբ ակներն սկսեն պտտվել, ապա պետք  
է արգելակել. յեթե ակները կանգ տռնեն բոլորը միա-  
ժամանակ, ուրիշն արգելակները ճիշտ են կանոնավոր-  
ված, իսկ յեթե վոչ պետք է կանոնավորել:

Առջեի ակները կարելի յե ստուգել ձեռքով:

Թաց և սայթաքուն ճանապարհներով ավտոմեքենան տեղի պետք ե շարժել շատ դանդաղ և սահուն կերպով, աքսելերատորը քիչ բանալ և կոնուսի պեղալը շատ դանդաղ բաց թողնել այն հաշվով, զոր շարժկապումը տեղի ունենա, վորքան հնարավոր ե, սահուն կերպով, վորպեսզի ավտոմեքենան տեղից շարժվի դանդաղ և առանց ակների սայթաքման:

Ավառութեանան տեղից շարժէլուց հետո, գազը պետք է ավելացնել աստիճանաբար:

Միանգամից գուզ տալու դեպքում ակներն արագ կլպտավին, նրանք այլև չեն շաղկապվի գետնի հետ և կսկսեն սայթաքել:

Վերոհիշյալ կարգով գործելիս, յեթե ավտոմեքենան տեղից չի շարժվում, և ակները սայթաքում են, ավտոմեքենան պետք է մի քիչ դեպի հետ շտրժել ապա նորից դեպի առաջ:

### 3. ԱՎԱՐԻԱՆԵՐ

Ճանապարհին ավարիայի հետևանքները մեկ շուրջ գործությունները հաճախ անհնարին ե լինում:

Այսպիսի գեղքերում պետք ե ոզնության կանչը անցնող շոփերներին, վորոնք պարտավոր են կանգ առնել և ոզնություն դույց տալ: Այդ նրանց քաղաքացիների կանությունն ե:

Անցնող մեքենան կարելի յե կասկածալ առաջ յալ կարգով ցերեկը ձեռքը պարզել ուսին հավասար ճանապարհի լայնությամբ, կամ մեքենայի վրա փոքրիկ դրական պարզել (կարելի յե կախել ձեռքի թաշկին)։

Գիշերը լապտերների լույսերն ուղղել ձանապար-  
հի լայնությամբ:

Կոտրած կամ վիչացած ավտո-մեքենան պետք ե կանգնեցնել վորքած հնարավոր ե, ճանապարհի յեղբին մոտիկ, ավելի լավ կլինի մեքենան բոլորովին դուրս հանել ճանապարհից, վորպեսզի չխանգարի մյուս փոխադրական միջոցների աղաս շարժումը:

Ուրիշներից ոգնություն պահանջելիս վարորդը չպետք ե մուսանա ոգնել նրանց ավարիաների կամ խորտակումների դեպքերում:

Ճանապարհին բենզինը վերջանալիս յուրաքանչյուր շոփեր պետք ե իր բենզինի մի մասը տա բենզին չունեցող շոփերին:

Ավարիաների դեպքում, յեթե անցնող շոփերից տված ոգնությամբ հնարավոր չի լինում ավարիա ունեցած մեքենան կարգի բերել, ապա վարորդը պետք ե հայտնի իր գարաժին և սպասի, մինչև վորոգնություն հասնի:

Յեթե ցուրտ յեղանակին պետք ե յերկար ժամանակ ոգնության սպասել, անհրաժեշտ ե մեքենայի ուղիառորդց ջուրը թափել:

Յեթե յերկու մեքենաներ ընդհարվում են միմյանց հետ, վորի հետևանքով մնասվում ե ավտո-մեքենան կամ այլ փոխադրական միջոց, անկախ նրանից, թե ով ե հանցավորը, անգամ փոքր մնասվածքների դեպքում, պնդած ե զրի առնել ավտո-մեքենայի կամ կառքի համարը և պատահարին մասնակցող վկաներին,

Յերբ ընդհարումների հետևանքով կամ այլ պատճառներով լուրջ մնասվածքներ կամ մարդկային զոհեր են լինում, անհրաժեշտ ե այդ առթիվ հայտնել տեղի միլիցիայի մարմիններին և ավտո-տեսչության կից հանձնաժողովին:

#### 4. ԱՎՏՈ-ՄԵՔԵՆԱՅԻ ՀՐԴԵԼԸ.

Ավտո-մեքենայում առաջացող հրդելը մարելու համար բոլոր գաղաժներում և առանձին ավտո-մեքենաների վրա պետք ունենալ հատուկ փրփրածին հըրշեցներ (ոգնետուլիտեներ) և յուրաքանչյուր շոփեր չեղներ (պողոսուլիտեներ) պետք ե լավ իմանա հրդեհի դեպքում հրշեցներով և պետք ե լավ իմանա հրդեհի ավտո-մեքենայում առաջացած հրդեհը մարելու կարգը:

Ընդհանրապես հրդեհն ավտո-մեքենայում կարող ե առաջանալ յերկու հիմնական պատճառներից, այն ե՝

1. Կարբուրատոր ու մ ստացվող կայծերից;
  2. Ելեկտրական լարերի կարճ միացումից:
- Առաջին դեպքում, յեթե հրդեհն առաջանաւ և առաջին հերթին պետք ե վակել բենզինի բակից դեպի ջին հերթին պետք ե վակել բենզինի բակից դեպի ջին հերթին պետք ե վակել կարբուրատոր տանող խողովակի փոքր ծորակը (կրակարբյուրատոր), հետո շարժիչը պետք ե աշխատեցնել արագ պտույտներով յեկ սկսել կրակը մարել հատուկ հրշեցներով. յեթե այդպիսին չկա, կրակի վրա պետք ե ներով. յեթե այդպիսին չկա, կրակի վրա պետք ե ներով յեկ թույլ չտալ, վոր բոցը տարածվի դեպի մեքենայի թափեը (կուզովը):

Այս դեպքում, քանի վոր կրակը չի մարել, շարժիչը չպետք ե կանգնեցնել, այլ պետք ե աշխատեցնել արագ պտույտներով, վարպեսզի նա ծախսի, վերջացնի կարբուրատորում յեղած բենզինը:

Կրակի վրա ջուր լցնելը յերբեք չի թույլատրվում, վորովհետեղ բենզինը կտարածվի ջրի յերեսին, յեկ կրակն ավելի լայն կտարածվի: Յեթե հրդեհն առաջանաւ ելեկտրական լար երի

Կաթն միացումից՝ պետք և անմիջապես ընդհատել շարժիչի աշխատանքը, փակել բնգինի բակի ծորակը (կըանիկը) և թույլ չտալ, վոր բնգինը հոսի դեպի կարբուրատորը. ապա պետք և անջատել լարերն ակումուլյատորից և սկսել կրակը մարել, ինչպես առաջին դեպքում:

Ելեքտրական լարերի կարճ միացումից հրդեհ առաջանալու դեպքում ակումուլյատորից առանց անջատելու հնարավոր չի լինի մարել կրակը:

Ավտո-մեքենան հրդեհից պաշտպանելու համար, ամենալավ միջոցն են

ա) Շարժիչը միշտ ճիշտ կանոնավորված պահել.

բ) Շարժիչը մաքուր պահել.

դ) Ելեքտրական լարերը կանոնավոր կերպով միացնել և հսկել լարերի մեկուսացման վրա, վորապեսզի նրանք լավ մեկուսացվուծ լինեն, մասնավանդ բարձր լարվածության լարերը:

## 5. ԱՎՏՈ-ՄԵՔԵՆԱՅԻ ԽԱՅՈՂԱԲԱՐ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ

Խորհրդային տնտեսության մեջ ավտո-մեքենաների ճիշտ շահագործումն ավտոտրանսպորտի վարորդներից հատուկ խնամք և պահանջում դեպի ավտո-մեքենաները և պահունի մասերի խնայողաբար գործադումը:

Ավտո-մեքենան, նրա այս կամ այն մասերը և ավտո-մեքենային պատկանող գործիքները պահպանելու և խնամելու պատասխանատվությունն ամբողջապես զրկում և շոփերի և այն բրիգադի վրա, վորին հանձնարկած և խնամել ու պահպանել տվյալ ավտո-մեքենան գարաժում, իսկ գարաժից դուրս պատասխանատվությունը զրկում և միմիայն շոփերի վրա:

Ավտո-մեքենան խնամելու և ճիշտ շահագործելու

համար, շոփերը լավ պետք և իմանա իրեն մեքենայի կոնստրուկցիայի առանձնահատկություններն ու նրա ներկա տեխնիկական վիճակը:

Ցեթե շոփերը նոր մեքենա յե ստանում, վորը կարող և նրան անձանոթ կոնստրուկցիայի մեքենա լինել, այդ դեպքում շոփերը պարտավոր և մանրամաս-նորեն ծանոթանալ տվյալ ավտո-մեքենայի բոլոր մասերի և մեքենայի կոնստրուկցիայի հետ և դեկավարել ավտո-մեքենան խնամելու և վարելու մասին ավառագործարանից տվյալ համապատասխան կանոնագրքով:

Այդպիսի դեպքերում շոփերը լավ պետք և վստահ լինի իր գործառությամբ ու հմտությամբ, վորովհետեւ ներկայում գոյություն ունեն բազմաթիվ ավտոգործարաններ, վորոնք արտադրում են տարբեր կոնստրուկցիայի ավտո-մեքենաներ և յուրաքանչյուր ավտո-գործարան իր նորությունները գործադրում և ավտո-գործարանից նոր ավտո-մեքենան շուրջ:

Ցեթե շոփերը չեկավարվի ավտո-գործարանի հրահանգով, այդ դեպքում կարճ ժամանակամիջոցում կիշառան ավտո-մեքենայի մասերն ու մեխանիզմները և հետեւապես կանաչեաքանա մեքենան ամբողջությումը գործարանից ստացված նոր ավտո-մեքենան շահագործման մեջ զնելիս պետք և հիշել, վոր նոր ավտո-մեքենայի շարժիչի մասերն ու շամսին դեռ լրիվ և հարկ յեղած չափով չեն աշխատել և իրենց տեղում լավ չեն հարմարվել, ուստի անհրաժեշտ և հատուկ ուշադրությամբ հսկել նրա ընդհանուր վիճակի վրա:

Առաջին 650 կ.մ. անցնելու ընթացքում մեքենայի արագությունը շարժման ժամանակ ներփոխյալ նորմաներից ավելի չպետք և լինի.—

## ՆՈՐՄԱՆԵՐ

Բեռնատար ավտոմեքենաների համար.

5 տոննանոց-մեկ ժամում 15 կ. մ.

4 » » 20 »

3 » » 25 »

1-1/2 » » 30 »

Մարդատար ավտոմեքենաների համար մեկ ժամում 35 կ. մ.-ից վոչ ավելի:

Եարժիչի յուղը պետք ե փոխել տուաջին 200 կ. մ. վազք կատարելուց հետո, ապա 400 կ. մ.-ից հետո, եսկ դրանից հետո սովորաբար ամեն մի 800 կ. մ. վաղքից հետո:

Ավտոմեքենաների մասերը քանդելու, հայլաքելու և կանոնավորելու ժամանակ պետք ե ոգտվել իրեն համապատասխան դորձիքներով, հակառակ դեպքում, ավտոմեքենայի մասերը կիշտապվեն և նույնիսկ կփչանան:

## 6. ՎԱՐԵԼԱՆՅՈՒԹԻ ԽՆԱՅՈՂԱԲԱՐ ԾԱԽՍՈՒՄԸ

Վառելանյութը պետք ե խնայողաբար ծախսել. դրա համար անհրաժեշտ ե՝

ա) Հետևել, վորպեսզի շարժիչը մշտապես ճիշտ կանոնավորված լինի.

բ) Բենզին կամ յուղ լցնելու ժամանակ չթափել:

գ) Կանգ առնելիս ընդհատել շարժիչի աշխատանքը.

դ) Շարժիչը դատարկ (խալաստոյ) չաշխատեցնել:

ե) Հետևել, վորպեսզի բենզինի բակից, ֆիլտերից, բենզինի խողովակներից, վակուում-ազարատից և կարբուրատորից բենզին չթափվի.

զ) Շարժիչը չաշխատեցնել ուշացած վառումով.

է) Զերթեկեկել շատ աղքատ կամ շատ հարուստ խառնուրդով:

Ավտոշիները ճիշտ շահագործելու համար անհրաժեշտ ե՝

ա) Շիներում մշտապես համապատասխան ճնշում պահել.

բ) Ավտոմոբիլի վրա նորմայից ավելի բեռ չը-բարձել.

գ) Խուսափել միանգամից արգելակելուց.

դ) Արագ գնալու ժամանակ կտրուկ դարձումներ չկատարել.

ե) Զերթեկեկել տրամվայի գծի ուղղանկարի վրայով.

զ) Հետևել, վորպեսզի շիների վրա յուղ կամ բեն-զին չթափվի:

է) Խուսափել շիների մեխանիկական ֆլասվածք-ներից, վորի համար պահանջվում ե ակները չքշել շի-նարարությունից ֆլաշած աղբերի վրայով (նրանց մեջ սովորաբար մեխեր, ապակու և յերկաթի կտրոներ են մինում):

ը) Ավտո մեքենան տեղում կանգ առած ժամա-նակ ղեկը չպատել:

թ) Զերթեկեկել մեծ արագությամբ, հատկապես վատ ճանապարհներով և հնարագոր յեղած դեպքում, աշխատել մեքենան չքշել ճանապարհի խորդ ու բորդ տեղերով:

Անհարթ ճանապարհների մշտական ցնցումները բացի շիների վրա վատ աղդելուց, վատ են աղդում ավտոմեքենայի մետաղե մասերի վրա, վորի հե-տեանքով փոփխվում ե մետաղների մոլեկուլար կազ-մությունը, այլ խոսքով փշանում ե մետաղի վրակը, որինակ՝ մանրահատիկ պողպատը փոխվում դառնում է

մեծահատիկ, և վատ ճանապարհով յերթևեկելիս, ավտո  
մեքենայի այս կամ այն մասերը կարող են հանկարծ  
անսպասելի կոտրվել:

Ավտոմեքենայի գոյությունը յերկար ժամանակ  
պահպանելու համար անհրաժեշտ և վատ ճանապարհ  
ներով պանդաղ և զգուշ յերթևեկել:

Վերոհիշյալ պայմանները հնարավորություն կտան  
վոչ միայն ռեզինը խնայողաբար ոգտագործել, այլև  
յերկար ժամանակ պահպանել ավտոմեքենայի բոլոր  
մասերը:

## Յ Ա Ն Կ

### I Գ Լ Ո Ւ Խ

եջ

1. Ճանապարհային-տղղարարական նշանները 3
2. Նախաղգուշական նշաններ . . . . . 4
3. Արդելական նշաններ . . . . . 6
4. Ռւղեցուց նշաններ . . . . . 7

### II Գ Լ Ո Ւ Խ

1. Փողոցային շարժման կանոնավորումը . . . 8
2. Փողոցային շարժման կանոնավորումը մի-  
լիցիոների ձեռքի բարձրացումով . . . . . 9
3. Փողոցային շարժման կանոնավորումը լու-  
սափորների միջոցով . . . . . 13
4. Փողոցային շարժման կանոնավորումը սու-  
լիչներով . . . . . 14

### III Գ Լ Ո Ւ Խ

1. Ինչպես պետք ե յերթևեկել քաղաքում . . . 15
2. Տրանսպորտի վարորդների կողմից ձեռքով  
տրվող աղղանշանների կարգը . . . . . 21
3. Փոխադրական միջոցների միմյանցից ա-  
ռաջ անցնելու կարգը . . . . . 24
4. Ինչպես պետք ե կանգնեցնել տրանսպորտը 27
5. Գիշերային յերթևեկություն . . . . . 29
6. Բուքսիրումը . . . . . 31

## IV ԳԼՈՒԽ

1. Յերթևեկությունը քաղաքից դուրս . . . . .	34
2. Յերթևեկությունը թագ և սայթաքուն ճաշ- նապարհով . . . . .	38
3. Ավարիաներ . . . . .	39
4. Ավտոմեքենայի հրդեհը . . . . .	41
5. Ավտոմեքենաների խնայողաբար շահագոր- ծումը . . . . .	42
6. Վառելանյութի խնայողաբար ծախումը .	44

ИКВ. 3

ՆԱԽԱԶԳՈՒՇԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐԻ ՏԻՊԱՄՆԵՐԸ

ՈՒՂԵՑՈՒՅՑ ՆՇԱՆՆԵՐԻ ՏԻՊԱՄՆԵՐԸ ՑԵՎ ՆՐԱՆՑ  
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



1. Յերկաթուղու պահպանվող գծանց:



2. Յերկաթուղու չպահպանվող գծանց:



3. Վոլորտներ - զիջզագներ.  
(կեռմաններ):



4. Ճանապարհների խաչմերուկ:




5. Ջանապարհի անհարթությունները (բարձրակայություններ):



6. Այլ վտանգներ:



16. Այս նշանը գրվում է դպրոց-ների, ակումբների և եասաբակության խիտ շարժման տեղերի մոտ:



17. Ավտոմեքենաների կանգ առնելու տեղի նշանը:



18. Շարժման թույլատրված ուղղաթյան նշանը: (Աւգիլ և աջ)

**БЕРЕГИСЬ  
АВТОМОБИЛЯ**

19. Դարձային անցքերի նշանները գրվում են դարձայի գոների մոտ և զգուշացնում են նետիուան շարժմաներին (զգուշացիք ավտոից):

ԱՐԴՅՈՒՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 14 միլ 15 հազարներությանց տվյալներու վերաբերյալ  
թվան ու ըստ մեջամատ շատերը պետք է հաշվի գտն գործադրության միջակա մակարդակության վահանակության մեջամատը:



13. Քաղի սահմանափակումը (բեռի ժաքսիմալ քաչն և 3,5 տոնն):




14. ԲԵՐՆՎԱԾՔԻ բարձրության սահմանափակումը (3,0 մ):



15. ՑԵՐԹԵՎԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՅԱՅՆ սահմանափակումը (2,1 մ):

ԱՐԴՅՈՒՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԻՊԱՐՄԱՔՆԵՐԸ 864 ՆՐԱՆՑ  
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



7. Փախաղբական միջացնելը յեղ թեղիկությունն արգելված է:



8. Արգելված ե ըեւնատար գիտազրական միջացնելը յեղի գեկությունը:



9. Շարժման արագության սահմանափակումը (15 կիլոմետր ժակ ժամություն):



10. Ավտոմեքենաների յերթեկն կությունն արգելված է:



11. Ավտոմեքեն աների յեղ մոտացնելուների յերթեվեկությունն արգելված է:



12. Կանգ առումն արգելված է:

ЗМІС 2 Р.

21

Арм.

2-3226-

(а)

Г.П.Б. в ЛНГР  
А. 1983 Ч. Г.  
Акт № 90

М. Агаканли

КАК НУЖНО ДВИГАТСЯ

изд Глев. Упр. Милиции 1983 Эреванъ

ՀՀ Ազգային գրադարան



NL0296116

24.068

H APM

2-3226a